

Hentchak :
ORGANE DU PARTI
RÉV. ARMÉNIEN
HENTCHAKISTE.

ՀԵՉԱԿ

ADRESSE
M. BELLART,
85, Peckham Rye
LONDON, S.E.
Angleterre.

ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՕՐԳԱՆ ՀՆՁԱԿԵԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

ՆՈՐ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

I

Այժմ մենք գտնուում ենք նոր ժամանակներում: Յանդուգն կը լինի նա, ով ասէ, թէ հայկական խնդրի շուրջը քաղաքական հանգամանքները միևնոյնն են, ինչ որ անցեալ դարու իննսունական թվականների սկիզբները, ինչ որ մինչև իսկ սրանից հինգ-վեց տարի առաջ: Աւելին է: Այդ հանգամանքները ոչ միայն միևնոյնը չեն, այլ և առաջացել են այնպիսի նոր երևոյթներ, որոնք մինչև մի յայտնի աստիճան տեղափոխուած են հայկական խնդրի կենտրոնակիւղը: Եթէ մեր խնդրի լուծումը միջազգային տեսակէտից կախած է Բերլինի դաշնագրից, եթէ, այդպիսով, նա գրաւորուած է եւրոպական վեց մեծ պետութիւնների ձեռքը, եթէ այդ հանգամանքը ցոյց է տալիս, որ մեր խնդրի լուծումը պէտք է կատարւէ այդ տէրութիւնների ընդհանուր համաձայնութեամբ, միւս կողմից, դեռ 1895 թ. ակնբերեալ եղաւ, որ պետութիւնների մէջ մեր խնդրի լուծման նկատմամբ համաձայնութիւն չուէր, և յետագայ տարիների փաստերն աւելի ևս ապացուցեցին այդ ճշմարտութիւնը: Ճիշտ է, որ սկզբից ի վեր հայկական խնդրի վրայ բաղխուած էին միշտ երկու հակաձայրեր, — անգլիական և ռուսական շահերը: Բայց ճիշտ է և այն, որ եթէ անգլիայի ոյժը գերակշռող էր դեռ մինչև իննսուն թվականների սկիզբները, այդ ժամանակից ի վեր ռուսական ազդեցութիւնը սկսաւ աճել, մինչև որ 1895 թ. հասցրեց իր հարւածը հայկական դատին, երբ սա վերջնական լուծման մէջ էր եւրոպական դեսպանաժողովում, Կ. Պոլսում: Ռուսական այդ ազդեցութեան վրայ աւելացաւ այն ժամանակները նաեւ դերձանականը, և բոլոր պաշտօնական տեղեկութիւններից և դիպլոմատիական բանակցութիւններից յայտնի է, որ 1895 թ. հայկական դատի լուծումը վիժեց շնորհիւ այդ

երկու պետութիւնների միատեղի հակառակութեան դէպքի նա:

Հայկական դատի լուծման անաջողութեան այդ պատճառները հանդիսացան այլ ևս անյաղութիւն և, աւելի ուշ, նրանք դարձան մշտական քրօնիկական արգելք: Պա, իսկապէս, նշանակուած էր Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի սահմանութեան յայտարարութիւն: Այո՛, եթէ այդ յօդուածը միշտ կը մնայ մի կողմից՝ պատմական փաստ, որ եւրոպական պետութիւնները պաշտօնապէս ճանաչում են հայկական դատի գոյութիւնը և ընդունում նրա շուտափոյթ լուծման անհրաժեշտութիւնը, եթէ միւս կողմից նա մեր ձեռքը տալիս է զէնք մեր իրաւունքների պաշտպանութեան համար եւրոպական միջազգային յարաբերութիւնների մէջ, — պարզ եղաւ, սակայն, որ իրականապէս այդ յօդուածը ոչ մի ծառայութիւն չէ կարող մատուցանել նաեւ հէնց այդ երկու տեսակէտից: Այլ դա այն պատճառով, որ եւրոպական վեց պետութիւնների մէջ երբէք ոչ մէկ ընդհանուր համաձայնութիւն չէ կարող կայանալ մեր խնդրի լուծման նկատմամբ, բացի լուռ համաձայնութիւն մեզ կոտորելու թողութեան մէջ և թիւրքական պետութեան գոյութիւնը պահպանելու, մինչև որ նա բաժան-բաժան կը դառնայ եւրոպական պետութիւնների ձեռքին:

Այլ, մենք յանդուգն չենք լինիլ, եթէ ասենք, որ եւրոպական պետութիւնների աչքին հայկական դատ այլ ևս գոյութիւն չունի: Աւելի և աւելի պարզուած է այսօր ամեն դիտողի աչքին — և դա մեզ համար պարզ էր դեռ շատ և շատ առաջ, — որ եւրոպական դիպլոմատիայի կողմից հայկական դատն այժմ նկատուած է գլխաւորապէս իբրեւ ռուսական պետութեան վերաբերեալ մի դատ, որի անլուծելիութեան պատճառը նա է և որի լուծման եղանակն էլ կախած է դարձեալ նրանից: Մեր դատը ռուսական տէրութեան կողմից նկատուած է իբրեւ Ռուսաստանի ներքին դատ: Այդ հանգամանքը ևս աւելի կշիռ է ստանում նրանից, որ ռուսական պետութեան հպատակ են այսօր երկու միլիօն հայ,

որոնց աշխարհագրական զիրքը շարունակութիւնն է Թիւրքաց Հայաստանի:

Եւ այդպէս, յայտնուում է, որ Թիւրքահայ դատի լուծումն այլ ևս ուղղակի կերպով կախած է — և այսօր աւելի քան առաջ — ռուսական քաղաքականութիւնից: Այդ ասելով, մենք մտանանիշ չենք լինում միայն նրա արտաքին քաղաքականութեան վրայ, այլ և ներքին: Եւս աւելի, մենք շեշտում ենք իսկ այս վերջին պարագայի վրայ, ռուսական կառավարութիւնը Թիւրքահայ դատը համարում է գլխաւոր մի հիմք իր մօտիկ արեւելեան քաղաքականութեան, որպէս և նրան օրգան ապէս կապւած է տեսնում իր ներքին քաղաքականութեան հետ իրա հպատակ ռուսահայերի նրկատմամբ: Եւ այդտեղ է գտնուում Թիւրքահայ դատի լուծման գորղեան հանգոյցի հիմնական խճճանքը: Եւ դա է, որ Թիւրքահայ դատը դարձնում է, իր գլխաւոր կէտում, ռուսական ներքին դատ: Եւ դրանում է նաև բացատրութիւնը այն հանգամանքի, որ Ռուսաստանը, վաղեմի երազ ունենալով տիրանալ Թիւրքական հողերի մեծագոյն մասին, դուցէ և արդէն իսկ, իր ամբողջ քաղաքականութեամբ, վերջին բսան և հինգ տարւայ ընթացքում, ձգտում է իր այդ երազի երականացման համար ուղի բանալ հայկական դատի միջոցով, այդ դատն առնելով ուղղակի երկամբի տակ և ծառայեցնելով նրան յօգուտ իր աւելի ընդարձակ յաւակնութիւնների: Այդ ընթացքի մէջ է պահւած բանալին այն տարօրինակ փաստի, որ ռուսական տէրութիւնն իրան հռչակեց «արեւելեան քրիստոնեաների հովանաւորող» և նախ Ռօյզարիան ազատագրելու պատրւակի տակ փորձեց նրան դարձնել ռուսական մի նահանգ և ապա ստեղծեց Սան—Ստեփանոյի դաշնագրի 16-րդ յօդւածը իբր յօգուտ Թիւրքահայերի: Անգլիան, սակայն, այս վերջին կէտում արգելք եղաւ Ռուսաստանին և ստեղծեց Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածը: Բայց ժամանակի ընթացքում Ռուսաստանն աջողեց խանդարտնք լինել այդ յօդւածի դործադրութեան — և դրա համար չը վաշտաւ իսկ իր գաղանի համաձայնութիւնը տալ սուլթանին կոստորածների նկատմամբ, — և ահա այսօր հասել է այն լիազօր գերբին, որ Թիւրքահայ դատի եւքը կրկին կախւած է նրանից:

Կրանք են ներկայումս Թիւրքահայ դատի

հանգամանքները, և այլ ևս կախւած լինելով ռուսական պետութիւնից՝ այդ դատը դալիս և զարմանալի բարդութեամբ ընկնում է այն տէրութեան քմահաճոյքի տակ, որը միեւնոյն ժամանակ տէր է երկու միլիօնաչափ ռուսահայերի: Գա մի մեծ ու ծանր երեւոյթ է, մի հիմնական դրութիւն է, որ առաջացնում է մի շարք հարցեր, նորանոր հանգամանքներ իրանց անխուսափելի հետեւանքներով և ստանում արմատական նշանակութիւն, դառնում առաջնակարգ պայման:

Այդպիսի պարագայում մի ծանր դեր է ընկնում հայ յեղափոխականների վրայ, մի մեծ պարտականութիւն է ստեղծւում նրանց համար, մի բարդ դրութեան մէջ է գնում նրանց գործունէութիւնը:

Այդ բոլոր հարցերը պէտք է ենթարկեն հմուտ քննութեան, և ապա դրա որոշումներից է կախւած ամբողջ յեղափոխական գործը յետագայում, իր առաջխաղացութեան և աջող ընթացքի մէջ:

Այո, մենք գտնում ենք այժմ մի նոր գործունէութեան առաջ: Եթէ չենք ուզում յեղափոխական գործունէութիւնը — մանաւանդ իր այս երկարատե տարատմութիւնից յետոյ — դատաւարտել կատարեալ մահացման, եթէ տակաւին մեզ զգում ենք կարող գործելու մեծ նպատակների համար, եթէ կրում ենք մեր մէջ գաղափար, սկզբունք և իդէալ, որոնք կապմել ենք մենք մեր ժողովրդի և մարդկութեան կատարեալ ազատութեան ու բարեկեցութեան նրկատմամբ, եթէ, վերջապէս, ընդունակ ենք արժանաւորապէս կրելու յեղափոխականի կոչում, — թող չը կրենք երկիւղ այս նոր ընդարձակ ասպարէզներից, որ բացւում են Գործի առաջ ներկայումս, ընդլայնում մեր հասարակական պարտականութիւնների սահմանը, բերելով մեր առաջ մի նոր գործունէութիւն իր վսեմ պահանջներով ու բեղմնաւոր արդիւնքներով:

Հնչակեան Ծարագիրն իր բարձր ու լայն հիմնական սկզբունքներով մեզ տալիս է և կռտայ միշտ ոյժ, կորով և գիտակցութիւն այդ նոր գործունէութեան համար:

Յետագային մենք կորոշենք այդ նոր գործունէութեան ընդհանուր դժերը:

ՄԵՐ ՏԵՆՁԸ

Ո՛հ, թող ներշնչուինք քո հոգով հզոր,
Ո՛վ անկախութիւն, սուրբ ազատութիւն.

Դու առիւծ սրտի իշխան փառաւոր,
Դու խիզախ մտքի տիրապետ անհուն:

Այսպէս պիտ կրկնեմ շնորհալի երգչի
Հանգունակ խօսքերն այս խորհրդաւոր.

Ի՞նչ բանի արդեօք, պիտոյ է կառչի
Երեւոյն մեր սիրտ, սաստիկ թունաւոր:

Կեանքի փրփրադէզ, կատաղի ովկիան
Ահա ընդգրկած լուսատու փարոս,
Որին հասնելու կուտամ առնական
Պիտ յաւէտ ձեղքենք ալիք յորդահոս:

Բայց ինչո՞ւ, արդեօք կամինք մեր Խա-ին
Անգործ ու քաղցրիկ երգով փաղաքշել,
Եւ նրա անյագ, մեղկասէր բիւքին
Կեանքի վայելքով անվերջ հրապուրել:

Ո՛հ, ո՛չ. ցասուժի ահեղ ժայթմունքով
Ելնել իբր անդամ մի մեծ համայնքի,
Ու բռնաբարուած ձայնին ջատագով
Կանգնիլ անասան՝ ուժով մեր բազկի.

Մինչև պանծալի Սուրբ Ազատութեան
Ժամը կը հնչէ ձայնով խնդագին,
Լոկ այն ժամանակ, Ազգ հալածական,
Փարոհիր քո առիւծ սրտի իշխանին:

Մինչև մարդկութեան մի վսեմ վիճակ
Հաստատուի քո մէջ խոր արմատներով,
Եւ բրտինք թափող անհատն իր վաստակ
Ինքը ճաշակէ հանգիստ, ապահով...

Թէ տըւել ես արդ, ով դու վեհափառ,
Անմահ Տիրապետ յաւիտեան կեանքի,
Ուժի դուզնաբեայ հոսանք կայծաւառ—
Օ՛ն, նետուինք մենք Սուրբ ասպարէզ Գործի:

Բայց թէ նահանջենք այս վեհ կոչումից՝
Ապա թող կորչենք կեանքում անքննին,
Եւ ցոյի շրջանի յաճախորդներից
Նշաւակութեան կանգնեն մեզ շիրիմ:

Լոնգոն

Ս. ՏԱՇԻՐ.

ԻՍՍԲԵՐ ՀԱՅՐԵՆԻՔԷՆ

Շ. Գարահիսար, 17, Ապրիլ, 1903.

Ութը երկար տարիներ սահեցան, անցան այն ա-
հաւոր տուամներէն ի վեր, որոնք վատ դիւանագիտու-
թիւնով մը հիւսուեցան հայ ժողովուրդին արդէն իսկ
գառնացած կեանքին վրայ՝ երբ փորձեց իր դժխեմ կա-
ղութեան գիտակ ընել,—գէթ մասամբ—աշխարհը և
նոյն իսկ... իր վեհապետ Սուլթանը իրաւ է թէ շա-
տոնց անցան կոտորածի ցայտուն արսափները, և սա-
կայն, տարիէ տարի ու օրէ օր մեր վշտերը կրկնա-
պատկուելու վրայ են ճակատագրական զժբաղդութիւ-
նով: Տաճկաստանի մէջ, հայերու յատուկ տնտեսական,
առևտրական, մէկ խօսքով, ապրուստի տագնապը հայ
ազգին առջև այնպիսի վիճ մը բացած է, որ պիտի կը-
լանէ կարծես ամբողջութեամբ՝ կորսնցնելով անոր ա-
նունն անգամ եթէ շարունակութեան մէջ ըլլայ այս
կործանարար ընթացքը, որ ուղղակի անդնդային բաւիղ-
ներ կառաջնորդէ ժողովուրդը Չափազանցութիւն գոյու-
թիւն չունի այս տողերուն մէջ, որոնց ճշմարտութեանը
համոզուելու համար՝ քիչ մը աւելի մօտէն կարելի է
կարեկիր սրտով ու սուր աչքերով դիտել հայ հա-
մայնքին վրայ տիրող անկարագրելի կեղեքումներն ու
աներևակայելի խժդժութիւնները:

Կառավարութեան այս տգեղ ընթացքը որակելու
համար՝ կը բաւէ խղճիդ դիմում մը ընել, ու հաստատ
համոզումը պիտի յաջորդէ անոր: Տաճիկ կառավարու-
թեան բռնած պլանը այնպէս մը սարքուած է, որ
խեղճ հայը, որ կողմ ալ որ դառնայ՝ աննպաստ հան-
գամանքներ, ֆեւս և կորուստ են գտնելիքները: Ապ-
րուստի միջոցներն խեղճին ձեռքէն խլուած են բոլորո-
վին: Շատ անգամ նոյն իսկ իր մօտակա բաղաքը չը
կրնար դիմել հաց ձարելու համար ընտանիքին և զա-
ւակներուն: Հարկադրուած է միշտ մնալ իր տեղը՝ ուր՝
եթէ բաղաքացի է, ազատ առևտուր մը ընելու կամ
ինքնին արձակ գործ մը բռնելու իրաւունքէն զրկուած
պէտք է մնայ, իբրև յաւիտենական դատապարտեալ.
հակառակ պարագային կրկնակի ֆեւսներով փճանալն
իրեն պատրաստ կպասէ ամեն ըրպէի համար: Իսկ եթէ
չինական՝ իր հունձքերը, արջառները, արտերն ու մար-
գերը և բոլոր ստացուածքը, իրենց արտադրութիւննե-
րով, պէտք չէ՝ որ իրենն ըլլան, այլ՝ թուրքին և բուր-
գին: Անոնք զժբաղդ շինականին ընտանեաց ապրուստը
ապահովող տարրեր չըլլալով՝ մեծերուն ու վաշխա-
ռուներուն միջերանոցները լեցնելու և անոնց որկոր-
ները պարարտացնելու պիտի ծառայեն: Այս անհան-
դուրժելի նեղութեանց պակասը լրացնելու համար՝ կու-
գայ կը միանայ տուրքերու անլուր խստութիւնն ալ: Սա-
կայն ասով ալ չլմնար տակաւին թուրք կառավարու-
թեան շահատակութեանց շարքը՝ Նա թոյլատու կը դրա-
նուի ամեն կերպով, որպէս զի թուրք և քիւրտ բար-
բարոս խուժանը հայուն կնկան ու աղջկան պատիւն ալ
ուզածին, պէս արատաւորէ և մեռցնէ հայութիւնը նիւ-
թական ու բարոյական կրկին տեսակէտներով: Մեր ժո-
ղովրդեան անտարբեր ու պահպանողական մասն ալ ըզ-

գաց այլ ևս թէ կառավարութեան միտքը բոլորովին ոչնչացնել է հայերը, մասնելով զանոնք նողկալի, սոսկալի կեղեքումներու: Երբ ատոնք տեսան թէ կառավարութիւնը՝ իր աղքատ թողուցած հայերու տուրքը իրենցմէ պահանջել կամ գանձելու միտումներ ցոյց կուտայ՝ աւելի ևս համոզուեցան թէ մօտ ատենէն զիրենք ալ անոնց պէս հացի կարօտ թողուլ պիտի ջանայ: Այնուհետեւ ինչ ընել սակայն, մերկ, անօթի, անպատասպար ու անպաշտպան:— Այն ատեն ալ նետուիլ, անշուշտ, օրթօտօքութեան գիրկը, գիմել բողբոջանութեան, նոյն իսկ թրքաշալ, և կամ ձգել հայրենիքը, հեռանալ իր բնիկ երկրէն, ուրանալ հետզհետէ իր նախնիներէն աւանդ մնացած լոյս-հաւատքը, անունն ու լեզուն, մարդկութենէ, ազգութենէ հեռանալ պարզապէս... Աստիկա է ահա, խեղճերուն ձեռքէն եկածն ու խորհիլ կրօնացածը: Միթէ թուրքին միտքն ու երկար ատենէն ի վեր իր փայփայած փայլուն ծրագիրն ալ աս չէ: Հայաստանը դատարկացնել հայերէն, կորսնցնել, ցրուել զանոնք ասդին անդին, աշխարհի չորս հովերուն: Ահա վիհը, անել անդունդը, խորխորատը, որուն եզրն ենք հիմա վարանոտ՝ և որուն մէջ գահաժիգած պիտի ըլլանք թերեւս մեր ապագայի մէջ անխուսափելիօրէն:

Մանրամասնութիւններուն գիմել շատ դժուար պիտի ըլլար. մօտակայ բանի մը դէպքերու օրինակներով բաւականանալը, ընթերցողները իրենց սրտէն հառաչեն թերեւս և ինքնին «ինչո՞ւ» «ինչ իրաւամբ» մուտան: Հարցումներ, որոնց պատասխանը չը գիտցուի թէ ո՞վ պիտի տայ:

* * *

Զարա, Սեբաստիոյ և Շ. Գարահիսարի մէջտեղ հաստատուած գայմագամանիստ գիւղաքաղաք մըն է ուր կան Արդարութեան նախկին ատեան և կառավարական կարգ մը պաշտօնեաներ: Զարայէ գրեթէ երկու ժամ հեռաւորութեամբ գտնուած ագարակի մը մօտ, արտահոսնալի ժամանակ՝ Զարայի Արապըշեան Ոսկեհանի կիները, արտ քաղած ժամանակ, յանկարծակիի կուգայ 4—5 հատ զինուած թուրք զինուորներու կողմէ՝ որոնք յիշեալ կնոջ վրան կը յարձակին, կը բաշեն մէկ կողմ կը տանին, ու կսկսին իրենց գազանային կրքին գործադրութեան՝ ուղաճնուն պէս և կատարեալ անվախութեամբ: Առեանգուած կնոջ հայրը, գրգռուած այս խժգոնութենէն, կը գիմէ կառավարութեան որուն ձեռք ձեռքներէն ալ զզուելով, թուրք շուններէն վախցած, կստիպուի ետ քաշուիլ, բանի մը թշնամիներ ալ աւելցուցած ըլլալու հաւանականութենէն իբր տոկոս...:

Անկէց բանի մը օր վերջ ուրիշ նմանօրինակ անբարոյական դէպք մ'ալ կը պատահի: Այս անգամ այդ գժեղագոյ պատահարին զոհ կերթայ Հայոնցեան Թագաւորին կինն՝ որ դարձեալ՝ արտ քաղած ժամանակ, խուժը մը աս կէտ խաչաղն երէ (զօրքի փախստական) բռնուածին պէս՝ կը տարուի հեռու տեղեր, ուր կարգաւ առեանգուելէ վերջ, անգգայ վիճակի մէջ գիշերով կը բերուի կը ձգուի իր տանը դուռը: Այս սոսկալի խայտառակութեանց ոմանց բողբոջը, և ոմանց ալ տուր կուգայ կը հասնի: Իր—կառավարութեան—խըլանալիք ակնջին և սակայն ինք գատապարտելիօրէն անփոյթ գտնուելով՝ կըլլայ նաև աղբիւր անիրաւուն թեանց:

Օրինակ մ'ալ տուրքերու խտրութեան և այդ առթիւ գործադրուած միջոցներու նկատմամբ: Ինչպէս առհասարակ բոլոր գիւղերն, նոյնպէս Ծեպերի գիւղի հայ բնակիչներուն հարկահաւաքները շատ մը նեղութիւններ տալէ վերջ կը մտնեն գոմերը, կը բաշեն անոնց բոլոր աւանակները ու կը բերեն քաղաք և կառավարութեան կը յանձնեն: Այս վերջինն բանի մը օր անասունները պահելէ վերջ ծախել կը հրամայէ՝ ի հաշիւ իրենց արքունական պարտքերուն: Մունետիկը (գէլլալ) կանչուելով՝ հայ գիւղացու այդ աւանակները կը յանձնուին անոր, որ ի վաճառ հանէ: Մէկ աւանակի գինը հազիւ 25 դուրուշի կը բարձրանայ: Այդ գնով կը ծախեն աւանակները (որոն հոգն է, կամ որոն սիրտ կը ցաւի երբ հայ գիւղացին 100—150 դուրուշնոց ապանքը 25 ի կերթայ): Եւ որովհետեւ աւանակները կառավարութեան մօտ 10 օրի չափ պահուած, խնամուած էին և ատոր համար օրական 2—3 դրշ ծախք եղած էր, և 5 դրշ ալ գէլլալ փարատի կը հաշուեն, հարկ կըլլայ որ գէթ այդ ծախքը բոցելու համար կենդանիները բանի մը դրշ աւելի գինով ծախեն: Ու մէկ աւանակը 25 առնողներէն 5 դրշ ալ բացէն կը պահանջեն: Հիանալի՝ նախանձախնդրութիւն Վասիւրական գանձարանի լեցուելուն համար... Թէև ի զօր, վասն զի մէկ մը ծախած է և ինչպէս ջուրը մաղին վրայ աւանակ ալ հոն այլ ևս դրամ հաւաքել կարելի չէ: Յօրդ շաբթու հարկահաւաքը հոն է դարձեալ: Բունի դուռը կոտրել, տուն մտնել, ունեցած չունեցածը բաշել անունը տանիլը սովորական բաներ են արդէն: Վերջի շաբթուն ալ Ածպտերցիք՝ բոլորովին ձանձրացած կեղեքումներէ, ու վերջին ծայր յուսահատ, կորոշեն օրթօտօքութիւնը ընդունել, Ռուս ըլլալ: Մինչև իսկ կը խորհին իրենց եկեղեցիին ու դպրոցին բանալիները բերել Շ. Գարահիսարի Առաջնորդարանը յանձնել: Տարւոյս սկիզբէն քաղաքի բանտերը լեցուած էին 50է աւելի տուրքի պարտք ունեցող աղքատ հայերով՝ որոնք գառջահոտ, խոնաւ ու մութ անկիւններու և նկուղներու մէջ չոր ու ցամաք, անօթի, անտէր կը հեծէին: Աղքատախնամը կուտար անոնց հացը. երկու ամիսէն աւելի բանտարկուած մնացին, բայց շարք մը ցոյցերէ և դիմումներէ վերջ կառվ, ստիպուեցաւ տեղի տալ:

Այլ առակ լուարուր... Բարեկենդանի շաբթի օրը, իրիկուան ժամը 11 ին ատենները, ժողովրդեան քաղաքէն բանի մը բոպէ դուրս գտնուող հանրային պարտեզէն վերադառնալու ժամանակ, Գարեգին Նալբանդեան անուն երիտասարդ մը, ճամբան ձեռքի մօտանին կորսնցուցած ըլլալով՝ քիչ մը ետ կը դառնայ փնտնելու սկսելով: Մօտակայ «գարախօլխանէն» գտնուող փոխ *** շատոնց ի վեր միտքը դրած ըլլալով՝ յարմար առիթ կը սեպէ և, «Գարեգին, իւզիւկ պէնտէ, կէլ քի վերէյիմ» ըսելով կը տանի պահականոցէն ներս երիտարարդին (Շ. Գարահիսարցի 20—22 տարեկան): Փօլիսը ապահով ըլլալու համար որ մարդ վրայ չըգայ՝ պահականոցին դուռը զգուշութեամբ կը փակէ և տղան լքելու նպատակով, Գարեգինի վրայ կը խոյանայ: Գարեգին թէև բանիցս կազդուարէ «վալ կել օ ագըլ տան», սակայն փոխը կը յամուի: Գարեգին ճարահատ՝ բովի աթոռին վրայ գտնուող զմեյին քաշելով, կսկսի փոխը վիրաւորել և զայն արիւնյուլայ գետին փռելով կը փախչի: Փօլիսը բողբոջէ և տղան բանի մը

օր անյայտ մնաց՝ որուն պատճառաւ 50է աւելի տու- ներ խուզարկուեցան: Աերջիվերջոյ միւթէսարը՝ Գա- րեգինի հայրը և ազգականները վստահեցնելով թէ անմիջապէս պիտի ազատէ՝ յանձնուելը յորդորեց: Ատոր վրայ Գարեգինը յանձնուեցաւ և այսպիսի ատենէ ի վեր դեռ բանտը սպասելէ վերջ, այսօր ալ երկու ամսուան վճիռ տուին: Զարմանալի բան, բացայայտ կերպով փո- լիսի անբարոյականութիւնը հաստատուելէ վերջ, տակա-ւին իր պաշտօնին վրայ հաստատ, ճակատաբաց կը բա- լէ անպարտ արձակուելով: Ինչ ազատամիտ և արդա- րասէր կառավարութիւն... շիտակը...

Հատ մը ևս, և փակեմ՝ այս թղթակցութիւնս, որ բաւական երկարեցաւ արդէն:

Անցեալները տեղւոյս մուհասէպէճին և ուրիշ կարգ մը կառավարական բարձրաստիճան պաշտօնեաներ իրենց հետ գէշ ճամբու հետևող մանչեր առած բաղաբէն 5 վայրկեան հեռաւորութեամբ՝ տնկուած հայ Պէյլերեան- ներու պարտէզին մօտիկ ուրախութիւն ըրած ատեննին՝ ատոնց տունէն ալ կարգ մը ամաններ կառնեն: Աերջը երբ տանտիրոջ տղաքը կուգան և ամանները կուգեն, այս պաշտօնեաները ամենը մէկ կյարձակին ատոնց՝ և տնեցի կանանց վրայ, և լաւ մը կ'ծեն: Այս բանը տարաձայնուած և բողբոռած է, բայց մինչև հիմա՝ կառավարութիւնը որ և է բան չըրաւ այս վայրենի անբարոյականներուն: Եւ արդէն ինչ պիտի ընէ, երբ իր օրէնքին գործադ- րիչ պաշտօնեաներն են ասոնք և իր օրէնքին ներկայա- ցուցիչներ իբր թէ...: Որպիսի արդարութիւն, իրաւունք:

Ահա այս և ասոր նման պատահարներ ամեն ա- տենուան համար շրջապատած են թիւրքիոյ մէջ բը- նակող հայերը, որոնց մէկ տկար արձագանգը ըլլալ փորձեցի, ուրուագծելով թիւրք կառավարութեան ան- կանոն ձգտումները, հանդէպ հայ աւարին, որը պիտի տեղեկագրեմ շարունակաբար:

ՍԻՓԱՆ

ՄԵՐ ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆԸ

ԵՒ

ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԳՈՐԾԸ

Անցեալ համարներից մէկում խմբագրութիւնը «Մի բանի խօսք» յօդաւածով՝ կրկին անգամ արծարծել էր, այսպէս ասած, հայ հասարակական օրգանիզմի հի-ւանդ օրգաններից մէկի խնդիրը, շօշափել հայ հասա-րակութեան թոյլ նեարդերից մէկը—հայ ուսանողու-թիւնը և նրա բռնած դիրքը դէպի յեղափոխական գոր-ծը: Մեր ուսանողութիւնը շատ անգամ է գրաւել թէ յեղափոխական և թէ լէգալ մամուլի ուշադրութիւնը. եւ շատ հասկանալի պատճառով. ուսանող երիտասա-րդութիւնը մի ժողովրդի ընտիր, հասկացող և կրթւած տարրն է, նրա կուլտուրան առաջ տանողը, նրա առա-ջադիմութեան ղեկավարը. ո՛չ թէ միայն դա, այլ և ընդունակ լինելով ըմբռնելու հասարակութեան կամ ժողովրդի կեանքի ցաւերը, կացութեան պայմանները, նա միշտ արտայայտողն է լինում դրանցից ծագած պա-

հանջների. նոյնպէս՝ հեռու լինելով շահերի կուլից, միշտ ճշմարտութեան պաշտպանն է հանդիսանում: Ուսանողութեան բարոյական և մտաւոր դրութեան մէջ է ար-տայայտում հասարակութեան ապագայ ֆիզիօնօմիան, ժողովրդի կենսունակութիւնը. որչափ բարձր է նրա՝ կարճ ասած՝ մարդկային յատկութիւնները, այնչափ աւելի բա-րօրութիւն է խոստանում հասարակութիւնը, այնչափ աւելի իւր գոյութիւնը պնդում է ժողովուրդը: Իսկ հայ ուսանողութիւնը արդեօք ունի՞ այդ ուսանողի հու-նից բղիտղ յատկութիւնները. բացարձակապէս ոչ, կը պատասխանէ իւրաքանչիւրը, ով քիչ թէ շատ ծանօթ է մեր ուսանողութեան հետ: Եւ ահա այդ պատճառով էլ մամուլը, ծառայած լինելով իւր կոչման, ստիպւած է գտնում իրեն մատնանիշ անելու այդ բարբառող հակասութեան վրայ, հարւածելու մեր արտի և մտքի անակութիւնը, արթնացնելու մեր թմրած գիտակցու-թիւնը:

Արկին անգամ նկարել մեր ուսանողութեան պատ-կերը լէգալ մամուլի շաբօնով՝ իմ նպատակը չէ. կու-ղէի միայն դէպքից օգտւել և պարզել հայ ընթերցո-ղին—այսինքն ո՛չ թէ այն հային, որը ճանաչում է Մեսրոպի «սուրբ հոգու ներշնչմամբ» հնարած հայկա-կան տառերը, և կարողանում է վարժ կապել դրանց իրար հետ, այլ և նրան, որը վառ հետաքրքրութեամբ, զգայուն սրտով և արթուն մտքով հետևում է մեր յեղափոխական մամուլին—մեր ուսանողութեան չէզո-քութեան պատճառը. ընդհանրապէս դէպի յեղափոխա-կան գաղափարը և մասնաւորապէս հայկական յեղա-փոխական գործը:

Ով որ եղել է ուսանողական շրջաններում, ով որ բաղդ (թէ՛ գժբաղդութիւն) է ունեցել յարաբերու-թիւն ունենալու ուսանող անունը կրող երիտասարդի կամ ուսանող եղած «ինտէլիգէնտի» հետ և ուշադր-րութեամբ դիտել է նրանց լուրջ զբաղմունքը, լուրջ խօսակցութիւնը, լուրջ վիճաբանութիւնները, հոգեբա-նօրէն թափանցել է նրանց միտքը, և միևնոյն ժամա-նակ նոյն դիտողութիւնն արել է օրինակ ուս յեղա-փոխութեան վերաբերեալ—ասում եմ, այդպիսին ա-ռանց մի վայրկեան անգամ տատանելու՝ կհամաձայնի հետս, եթէ պնդեմ, թէ մեր ուսանողութեան դատա-պարտելի չէզոքութեան պատճառը կայանում է նրա մարմնացած լէգալիզմութեան և աչք ծակող բա-ղաբական տհաճութեան մէջ. դրանք են ահա հայ ազգի «թագն ու պսակը» կազմող երիտասարդութեան մտաւոր էպիդէմիան:

Մեր լծացած մտքի այդ երկու յատկութիւնները իրար պայմանաւորում և իրարից հետևում են, լինելով բաղաբանապէս տհաս, մենք խոյս ենք տալիս սօցիալ-տնտեսական խնդիրներից, չենք զբաղւում, չենք էլ հե-տաքրքրւում հայկական յեղափոխութեան գործով. իսկ չենք գրաւում յեղափոխական գաղափարներով, սոսկում ենք հայկական յեղափոխութեան անունը լսելով, որով-հետեւ լէգալիզմի մէջ փոխել է մեր միտքը: Ով մի ան-գամ ընդ միշտ ազատւել է արձակ միտքը կալանաւո-րող լէգալիզմի շղթաներից, նա պէտք է բնականօրէն յեղափոխական լինի, բառիս ընդարձակ առումով. ում միտքը հասունացած է բաղաբանապէս, նա պէտք է, այսպէս թէ այնպէս, զբաղւի հայկական յեղափոխու-թեամբ, որովհետեւ դա ժամանակակից մեր ամենամեծ

բաղաբական շարժումն է: Քաղաքական տհասութիւնը և լէգալամտութիւնն չեն պատճառը, որ մենք ահաբեկի անտարբերութեամբ ենք վերաբերուում դէպի կենդանի և սպազբական այն խօսքը, որ յեղափոխական գոյն ունի, որի յօգւածները սօցիալ-քաղաքական գոյն ունին, որի թղթակցութիւնները ներկայացնում են արնաքամ եղած ժողովուրդի տնտեսական սոսկալի վիճակը, հոգեկան յուսահատութեան արտասուալի դրութիւնը, նկարագրում բանւորների բողոքի հերոսական արտայայտութիւնը....

Իսկ տենդային հետաքրքրութեամբ հետեւում է լէգալ մամուլի հրապարակական բողոքանութիւններին: Մեր մտքի սնունդը, մեր զբաղմունքի սիրած նիւթն այն չէ՞ արդեօք, թէ Մշակ-Մուրճը ինչպէս է կծել Արարատին, սա էլ ինչպէս արացի տւել նրան, իսկ Նոր-Գար-Լու-մա ինչպիսի ատամներ է ցոյց տւել: Մեր աչքը ջուր է կտրում, երբ լէգալ մի թերթի համարը ուշանում է. բայց թող մեզնից իւրաքանչիւրը խոստովանէ իւր խղճի դիմաց, արդեօք նա երբ և իցէ հետաքրքրւել է իմանալու՝ յեղափոխական որ և է թերթի համարը ստացւել է թէ ոչ.... Թէ որչափ գերի ենք մենք մտքի այդ երկու յատկութեան՝ ցոյց է տալիս Լայպցիգի «Ուս. Յեղափ. Ընկ.» քայքայումը, (*) «Եւրոպ. Հայ. Ուս. Միութեան» անկայուն վիճակը:

Քաղաքականութեան մէջ մեր մտքի տհասութիւնը ցոյց է տալիս ուսանողութեան ընդհանրապէս մտաւոր յետամնացութիւնը, մտաւոր կեանքի մանկութիւնը, ինչպէս որ դպրոցական աշակերտի համար ամբողջ գրականութիւնը պարունակւում է միմիայն վիպականի մէջ, այնպէս էլ բարձրագոյն (և համալսարանական!) ուսում ստացող հայ երիտասարդի համար հասարակական և ազգային կեանքը սպառնում է հրապարակական մի բանի «հրատապ» խնդիրներով, որոնք 40—50 տարի առաջ նշանակութիւն ունէին, երբ նորածին քաղաքակրթութիւնը ուրիշ հարցեր չէր կարող ծագեցնել, բայց եթէ կրթական, եկեղեցական, բահանայական, ժամկոչական և տիրացուական: Ցակաւին այսօր մեր այդ տափակ, բռն զրուկները հրճւում են Մշակ-Նոր. Գարեան մտքերով, դրանց հասարակական-ազգային անտիկաւրեան գաղափարներով, ուշադրութիւնը լարում հրապարակական արխիւը նետւած կամ էլ պառաւններին յատուկ հարցերով: Այնինչ հայկական իրականութիւնը, շնորհիւ կեանքի բնական զարգացման, բոլորովին այլ պահանջներ է դրել մեր առջև. հայութեան տնտեսական կեանքի զարգացումը փոխել է մեր առջև քաղաքականութիւն. հայ ժողովուրդի քաղաքական և տնտեսական ճնշումը աղաղակում է մեր ականջներում յեղափոխական գործ. կապիտալիստական նորածին կարգերը հայկական երկրներում ցցել են մեր աչքի դիմաց սօցիալական քաղաքականութիւն. իսկ մենք՝ անտարբեր սիւներս՝ խուլ ենք և կոյր դէպի այժմեան իրական կեանքի պահանջները: Ինչո՞ւ. որովհետեւ հեռու մնալով քաղաքականութիւնից, մասնել ենք մեր միտքը լճացման և անշարժութեան: Մշտքի նեխածութիւն չէ՞ երբ քաղաքական և տնտեսական

կեանքից առաջացած հասարակական երեւոյթներով ըզբաղւելու փոխարէն, սահմանափակւում ենք նախորդ սերունդից զօգմայօրէն ընդունած հրապարակական մանրմունք խնդիրները ծածմելով. երբ յեղ. գործի հետ ծանօթանալու, նրա պատճառներն ուսումնասիրելու, մեր անգլուխ սիւնները տակաւին արին-բրտինք են թափում իմանալու՝ որն է աւելի կարեւոր և նշանակալից, կենտապար թէ մեծ պատը, կամ էլ կոկորդ պատուում, թէ եթէ թեմական դպրոցների տեսուչը լինի պոս չընդունող մի լէգալամիտ լիբերալ բժիշկ, հայ ազգը կփրկւի ամեն չարիքներից:

Միւս կողմից էլ լէգալիզմն է, որ բթացրել է մեր մտածողութեան օրգանը, ծծել մեր ուղեղի հիւթը, շղթայել մեր մտքի ազատ թռիչները: Ինչպէս կարող է մէկը յեղափոխական լինել, բառիս իսկական իմաստով, երբ նրա միտքը, ոսկրների ծուծն անգամ թունաւորւած է լէգալիզմով: Լէգալիզմ և յեղափոխականութիւն — այդ գաղափարները այնպէս են իրար թշնամի, ինչպէս ջուրը և կրակը: Լէգալ մտածողութեան եղանակը մի ախտ է, որով վարակւած է հայ ուսանողութեան բացարձակ մեծամասնութիւնը. նա մի տեսակ ժառանգական հիւանդութիւն է դարձել, որ ամենախոր կերպով արմատացած է մեր ուղեղում: Լէգալիզմը մեր ուսանողութեան օդն է, որով նա շնչում է. հացն ու ջուրը, որով կերակրւում է. դրա մէջն է նրա իդեալը: Եթէ հայ ուսանողը ընդհանրապէս իդեալ ունենալ իրօք կարող է, եթէ նրա վերաբերմամբ այդ պաշտելի բառը սրբապղծութիւն չը լինի. դրա մէջն է նրա ոգեւորող աւարկան, եթէ ի հարկէ հայ ուսանողը ոգեւորւել գիտէ. դա, վերջապէս, նրա ամենասիրած և պաշտած անոցն է, որով նայում է իրականութեան վրայ: Անել այն ինչ որ թոյլ է տալիս միապետական կամ բուրժուական օրէնքը, շարժւել այնպէս, ինչպէս թելադրում է դարերի սովորութիւնը, մտածել այնպէս, ինչպէս մշտածում է մարդկութեան ոչխարային մեծամասնութիւնը. զբաղւել նրանով, ինչով որ կարելի են գտնուաներկայ կարգերի պաշտպանները՝ մտաւոր, հոգեւոր և մարմնաւոր իշխանութիւնները — ահա կեանքի այն օրէնքները, որոնց գլխիկոր հետեւում ենք մենք: Լէգալիզմի արին ու մարմին դարձած լինելը չէ՞ պատճառը, որ ազատ Եւրոպայում անգամ խոյս ենք տալիս ազատ խօսքից և զբաղմունքից, հրապարակական այն ժողովներից, ուր արտայայտւում են յեղափոխական մտքերը, մենք փախչում ենք, մեր աչքերն ու ականջները գլխարկի մէջ թաղցնելով, իսկ նման մի ժողովում, ուր մի Հառնակ, ուր մի Բիխտեր եթէ խօսելու լինեն, առաջին տեղն ենք բռնում ու ինքնագովութեամբ զուռնա փռչում և լէգալ մամուլին զմայլեցնում: Մեզ պատահել է լսել նոյն իսկ «Եղափոխականներից» (վայ մեզ), թէ Կովկասում լէգալ հողի վրայ միայն պիտի գործել.... Մարմնացած լէգալիզմի խուլ ձայնը չէ՞ դա: Ճշմարիտ, եթէ ուս կառավարութիւնը իմանար մեր իսկական դէմքը, ուս իդեալական ուսանողութեան չափով չափէր հայ ուսանողներիս էլ, հաւատացէր, նա մի-մի շքեանշան կտար մեզ մեր «խելօքութեան» համար, և մենք կպարծենայինք....:

Ուրեմն, ապատիական անտարբերութիւն դէպի յեղափոխական գործը, մարմնացած լէգալիզմ, մեռելա-

(*) Այդ ընկերութեան հետաքրքիր պատմութեան հետ կը ծանօթացնենք մեր յեղափոխական ընթերցողին ուրիշ տեղ:

յին վերաբերմունքը դէպի ժամանակի յեղափոխական քաղաքական խնդիրները, ահա այն կուռքերը, որոնք պաշտաման առարկայ են մեր ուսանողութեան համար: Եւ մինչև որ այդ կուռքերը կենդանի են մեր մէջ, ո՛չ մի յեղափոխական մարմին և գործ առաջ չեն գնալ: Մեր լէգալիզմը, յեղափոխական մտքի այդ ամենաոխերիմ թշնամին, և դէպի նոյն այդ մարի մեր անտարբեր վերաբերմունքը պիտի ամենախիստ հալածանքի, հարաւածի ենթարկեն հայ յեղափոխական մամուլի կողմից: Նա պիտի անխնայ մտրակէ մեր այդ կուռքը, պիտի մեր կաշի դարձած երեսը սեւացնէ, համեմատելով մեզ օտարազգի ուսանողութիւնների հետ: Նա պիտի մեղ էլ յեղափոխութեան մէջ տգէտ ինտելիգենտներէս հասկացնէ, թէ կուլտուրական բոլոր երկրների վրայ տարածւող յեղափոխական գաղափարը մի առասպել չէ, մտքի ֆանտաստիքական ստեղծագործութիւն, այլ մի ճշմարտութիւն, մարդկային սեռի համար այս իրական կեանքում նիւթական և մտաւոր անսահման բարիքներ բերող մի հսկայական ոյժ, թէ՛ յեղափոխական գաղափարը մի յիմարական երազ, մի ունայն բաղձանք չէ, որ խորտակուի է երկաթէ իրողութեան դիմաց, այլ գիտական հետազոտութեան արդիւնք, տնտեսական կեանքի զարգացումից բխող անհրաժեշտութիւն: Այո, «երջանիկ է նա, որին վիճակած է իւր ուժերը յեղափոխական շքեղ ու հոյակապ իդեալի իրականացան կուրին ներելու»:

Ս. ԿԱՍԻԱՆ.

ՆԱՄԱԿՆԵՐ ԿՈՎԱԿԱՍԻՑ

Բագու, 4 Ապրիլի, 1903.

Դեռ ևս անցեալ տարւայ վերջերին ոռու յեղափոխականների մէջ ցանկութիւն էր նկատուում մի զուտ բաղադրական բնավորութիւն կողմ ցոյց անելու, անկախ Մայիսեան ցոյցից, բանի որ վերջինն ընդհանուր է բոլոր երկիրների բանւորների համար և շօշափում է բանւորի տնտեսական կողմը միայն:

Տեղական Առաջին համաձայն շրջանային Առաջինների այդ մասին տալով հաւանութեան՝ որոշեց մի զուտ բաղադրական բնավորութիւն կողմ ցոյց անել: Թէպէտև ցոյցը սպասուում էր փետր. 19-ին՝ ճորտերի ազատութեան 42-րդ տարեդարձի օրը, սակայն, բոլոր Առաջինների պատրաստ չը լինելուն պատճառով՝ յետաձգւեց Մարտի 1-ին, որ պակաս նշանակութիւն չունի ոռուական յեղափոխութեան պատմութեան մէջ: (Մարտի 1-ը Աղէքսանդր Բ. Կայսեր սպանման օրն է): Մինչև այդ օրը հայերէն, ռուսերէն լեզուներով տպւած մի շարք թուոցիկներով բացատրուած էին այն շարժառիթները, որոնք ստիպում էին պրոլետարիային (սեպհականագուրկ բանւորին) բացարձակ կերպով հը-

րապարակ գալ, իւր բողոքը յայտնելու բռնակալ կառավարութեանն առաջարկութիւնը ի հարկէ ցրած թուոցիկներից զգաժողացած՝ միշտ կազմու պատրաստ կանգնած էր, իւր կապարէ թաթը խռովարարների գլխին իջեցնելու համար: Այդպէս է յայտնի հրովարտակի գաղտնի իմաստը: Զբաւականանալով տեղուս գտնւած 200 կողակներով՝ բերել էին տեղ դարձեալ 200 կողակ: Դռնապաններից շատերը, ստորին ոստիկանի համազգեստներ հագած, դրած էին ոստիկանութեան տրամադրութեան ներքոյ: Թիֆլիզից բերւած էր յայտնի խուզարկու լավօքը, որին և յանձնւած էր ղեկավարութիւնը:

Դեռ վաղ առաւօտեան (*) հետաքրքիր հասարակութիւնը խռնուած էր «Պարապետ» կոչուած հրապարակի և նրա շուրջը գտնուող տների կուռքների վրայ: Մօտակայ մի բանի փողոցներն անանցանելի էին դարձել: 8—10 հազար հոգի անհամբեր սպասում էին կարմիր դրօշակի պարզելուն: Փողոցներում և հրապարակի վերայ ցրւած էին հազարաւոր թուոցիկներ, որոնց վրայ նկարւած էր Նիկոլայ Յարը թաւալգոր ընկած իւր փառահեղ դահից, իսկ մի բանւոր, ոտքը Յարի կրծքին դրած՝ ձեռքին պարզած մի դրօշակ՝ «Թող կործանւի միապետութիւնը, կեցցէ բաղադրական ազատութիւնը» մտկաբոլորութեամբ:

Ոստիկանութեան ձեռք առած միջոցների շնորհով ցոյցն անհնար եղաւ վերոյիշեալ հրապարակից սկսել, այլ ատիպւեցան մերձակայ «Մալականսկի» կոչւած պարտեզի մօտից սկսել: Ժամը ճիշտ 11-ին պարզեց կարմիր դրօշակը: Այդ նոյն վայրկեանին օդը դղրդաց հարկուաւոր ձայներով՝ «Թող կորչի միապետութիւնը, թող կորչի Յարը. կեցցէ բաղադրական ազատութիւնը», որոնց հետեւեց ոստիկանների և կողակների մտրակների շաշիւնը՝ անխնայ իջնելով ամեն մի պատահողի գլխին: Ցուցարարները կուռում էին բարերով ու մահակներով: Հասարակութեան մեծամասնութիւնը կատարում էր հանդիսատեսի դեր: Ցուցարարներին յաջողեց մի կողակ սպայի լաւ շարժումիչուր անել՝ իւր երկու կողակների հետ: Նահանգապետի օգնականը՝ այդ տեսնելով՝ հըրամայեց կրակել օդի մէջ: Հրամանը կատարուեց: Ցուցարարները լսելով գնդակների որոտը, կատաղաբար յարձակեցան նահանգապետի օգնականի վրայ, գլխի ու թևի վրայ վէրքեր հասցնելով: Նրան խկոյն փակցրին մօտակայ տներից մէկը, և տնմիջապէս բժշկի դիմեցին վէրքը փաթաթելու համար: Ցուցարարներից շատերը, մտրակների հարուածներից կապուած ու ջարդուած մեղանուններով շարունակուում էին անհաւասար կռիւը:

Մի տարօրինակ զուգահեռութիւն: Այդ նոյն րո-

(*) Ցոյցի օրը թէեւ նշանակուած էր Մարտի 1-ը, բայց որովհետեւ այդ օրը շաբաթ էր, բանւորներն աշխատում էին, եւ եթէ աշխատանքը ձգէին, կառավարութիւնն իսկոյն կիմանար, ուստի եւ թողնուեց Մարտ 2-ին, Կիւրակի օրը: Փետր 28-ի գիշերը մի շարք ծերբակալութիւնների պատճառով ցոյցն այն յաջողութիւնը չունեցաւ ինչ որ սպասուում էր, որովհետեւ գործադրիչներից երկուսը կալանաւորուած էին: Ժ. Ե.

պէին՝ երբ մարդիկ կուռում էին բռնութեան դէմ. երբ մարդոց իրաւացի պահանջին պատասխանում էին մտրակներով, գնդակներով, այդ նոյն պահուն՝ հայոց եկեղեցու գաւթում խռնուած հետաքրքիր ժողովրդին ցրելու համար՝ մի ոստիկան ձիով ներս է մտնում գաւթ (եկեղեցին գտնուում է Պարապետ կոչւած հրապարակի վրայ) և սկսում է մտրակով վանել այնտեղ հաւաքւածներին, Հասարակութիւնը՝ զայրացած՝ դուրս է վանում յանդուգն ոստիկանին հարայ հրոցով: Այս ամենը դուրսը կատարւելու միջոցին, ներսը պատարագ է մատուցւում հայ ազատ եկեղեցու Ս. Սեդակին: Հայ վարդապետը բարոզ է խօսում, բնաբան վերցնելով օրւայ ցոյցը, կամ աւելի պարզ, եկեղեցուց դուրս կատարւածը:

Ահա թէ ինչ է ասում հայոց «ազատամիտ» հայր սուրբը (Մես. Վ. Տէր-Մով.). «Ամեն կերպ հալածեցէք այդ խռովարարներին, հնազանդ եղէք բարեխնամ թագաւորին, խրատեցէք ձեր որդոց, որ չհետեւեն խռովարարներին: Այս ինչ չտեսնուած բան է, օրիորդներն անգամ մասնակցում են այդ կործանարար շարժման» ևլն. ևլն.: Բացատրութիւններն աւելորդ են... «Պարտաճանաչ» վեղարաւորի բարոզը նողկալի տպաւորութիւն թողեց լսողների վրայ...

* * *

Նախնազապետի օգնականի վերաւորելուց յետոյ՝ ոստիկանութեան և կողակներին յաջողեց ցուցարարներին երկուսի բաժանել և, այդպիսով, ուժերը ջրլատելով՝ վերջ գնել ցոյցին: Սակայն հետաքրքիր հասարակութիւնը մինչև երեկոյ փողոցներից չէր հեռանում: Այդ օրը ձերբակալեցան 27 հոգի, որոնցից 7—8-ը տեղական արքունի դպրոցներում սովորողներից էին: Այդ նոյն օրը երեկոյեան ներկայացում կար տեղական թատրոնում, որին ներկայ էր նախնազապետի օգնականը, ժողովրդին ցոյց տալու համար, թէ իր հետ ոչինչ չի պատահել: Թատրոնում էլ թուուցիկներ բաց թողին:

Այս բոլորից յետոյ մարտի Մարտ 9-ին փակեցին Հայոց Մարդասիրական Ընկերութեան դրադարան ընթերցարանը, պատճառաբանելով, թէ այնտեղ թուուցիկ է գտնուած եղել. մինչդեռ, քանի որ գրադարան-ընթերցարանը հասարակական հիմնարկութիւն է, կարող էր պատահել, որ այնտեղ էլ թուուցիկ ձեռք էին: Մի խօսքով, բարեխնամ կառավարութիւնը ամենաողորմածաբար փակեց այդ միակ հաստատութիւնը, ուր Բագուցիք իրենց ազատ ժամերում մի փոքր մըտաւոր զբաղմունք էին գտնում: Եթէ ամեն մի հաստատութիւն, որտեղ թուուցիկ են գտնում, փակեն, ապա ինչու բարեխնամ կառավարութիւնը երկաթուղու կայարանները չի փակում, քանի որ բոլոր լոյս տեսած թուուցիկները ամենից առաջ կայարանների պատերի վրայ էին կպցրած: Նոյն օրը Բալասանու նաւթահանքերում էլ ցոյց եղաւ: Մի քանի տեղ միայն ոստի-

կանութիւնը խիստ միջոցների չդիմեց: Ոստիկանապետը խնդրում էր, որ ցուեն՝ ցուցարարներին Ծ ռ. նւիրելով, որոնք անշուշտ կը մտնեն իրենց գանձարանը իբրև նւէր ոստիկանապետից:

Փետրվար և Մարտ ամիսներում Ռուսաստանի շատ բաղաձններում ցոյցեր եղան, իսկ Վովկասում՝ Թիֆլիս Բաթում, Բագու և Բալասանի բաղաձններում:

Այստեղ, ի միջի այլոց, աւելացնենք, որ Վովկասի հայ մամուլը հրաշքներ է գործում: «Մշակ»-ը, այդ ինքն իրեն ազատամիտ համարող պառաւ թերթը, որ Պօլսի թերթերին միշտ պնակալէզ է անւանում, այս անգամ էլ ինքն է պնակալիզութեան ամենապերճախօս ապացոյցը տալիս: Այդ թերթը փետր համար, ներում Ցարի վերջին հրովարտակին մի պնակալէզ ներբող է նւիրել, որ հասարակութեան գարշաճին արժանացաւ...: (*)

ԾԱՆՕԹ.

Բաթում, 10 Մայիսի, 1903.

Ռուսաստանը, եթէ կարելի է այսպէս ասել, ծանր տագնապի մէջ է: Այս լայնածաւալ և բազմացեղ պետութեան ամենատանջուած և, միևնոյն ժամանակ, կըրթութիւնից զուրկ տարրը, բանւորը և գիւղացին, սոցիալ դէմոկրատների տոկոսն աշխատութեամբ մօտեցել է ձգնիլ՝ իւր դարաւոր կորցրած անհատական իրաւունքները ձեռք բերելու: Վերջին տարիների ռուսանդական շարժումները, սոցիալ-դէմոկրատների, ժողովրդի ցաւերով և վշտերով սոգորուած երիտասարդների բուռն ջանքերը ահագին փոփոխութիւն են մտցրել յիշեալ տարրի մտածելու, խորհելու եղանակի մէջ: Ամբողջ Ռուսաստանը պատած է սոցիալ-դէմոկրատների կազմակերպութիւններով, որոնք տենդային գործունէութեամբ, թուուցիկներով, գաղտնի յեղափոխական թերթերով և նոյնանման բրոշլիւրներով ահագին յեղաշրջում են առաջ բերել բռնակալ պետութեան և բուրժուայի ճիրաններում շահագործող, հարստահարող դասակարգի հոգու և մտքի մէջ: Ստրուկ բանւորը, ստրուկ «մուժիկ», այլ ևս նոյն խոնարհութեամբ, վիզը ձկած չէ ընդունում Ցարից և նրա ծառաներից եկած հրամանները իբրև Եհովայի պատգամներ: Եւ, ով գիտէ, գուցէ հե-

(*) Այդ թերթի պնակալիզութիւնը նոր չէ. դրա արհեստն է: Դեռ անցեալ տարիներն էր, որ հանգուցեալ խմբագրի անարժան յետնորդներից Լ. Վերաստանը Ռուսաստանի հետ միացնելու 100-ամեակին նուիրած յօդուածում Ռուսական զրօջը բարձր պարգած՝ Տաճկա-Հայաստան էր արշաւում...: Մարդիկ բռնակալ տէրութեան մէջ ապրելով, փոխանակ գոնէ լուելու, ստորաբարշուութեամբ և պնակալիզութեամբ են զբաղւում:

ԽՄԲ.

ուու չէ այն ժամանակը, երբ կը խորտակուի բռնակալութեան տիրապետութիւնը և Ռուսաստանը՝ գէթ սահմանադրական, բուրժուական կառավարութիւն ունենալով՝ չարիքներէն փոքրագոյնին կարժանանայ: Նա, գործարաններում՝ ճնշուած կորաքամակ «մուծիկը» արդար իրաւունքով պահանջում է այն, ինչ որ ընդունուած է եւրոպական քաղաքակիրթ պետութիւնների մէջ՝ մամուլի, խօսքի, ազատ խմբուելու ևն. ևն. անպայման ազատութիւն: Սակայն Պրեզիդենտի սանկի մտերիմներին այդ բանը հաճելի չէ: Նրանք բուռն եռանդով աշխատում են, որքան կարելի է, ժողովուրդը տգիտութեան մէջ պահել և գիտակեց «խռովարար» երիտասարդներին աքսորել Սիբիրի խորքերը, կամ խոնաւ ու մութ բանտերում մաշել և անգամահատել ժողովուրդի այս թարմ և բեղմնաւոր դասակարգը:

Այս վերջին քստմենքի հանգամանքը, կրթուած և ժողովուրդի ազատութեան մտքերով տոգորուած երիտասարդութեան աքսորանքը խորին տատելութիւն և դարշաւ է յարուցել ժողովուրդի խաւերի մէջ, որը Ռուսաստանի ամեն մի նշանաւոր քաղաքի մէջ՝ միացած բանւոր դասակարգի, և ընդհանրապէս սոցիալ-դեմոկրատների հետ, սկսել է բացարձակ և ազդու կերպով իւր խորին դժգոհութիւնն արտայայտել բռնակալ կառավարութեան դէմ: Օր չի անցնել, որ այս կամ այն քաղաքում հինգ, վեց, եօթ հարիւր մարդկանցից բաղկացած բազմութիւն չպարզեն շահագործուած ու հարստահարուած դասակարգի պաշտպան՝ կարմիր դրօշակը և լուրջ ընդհարում՝ չունենան ժանդարմների հետ: Այս գործողութիւնն այժմ այնքան սովորական է դարձել, որ խելակորոյս կառավարութիւնը՝ հազարաւոր պահակներ խմբերի բաժանած՝ տարածել է զանազան քաղաքներ, այնպէս որ ամեն քաղաք պաշարողական դրութեան մէջ է, բառիս իսկական նշանակութեամբ:

Ժողովուրդի աճեցող ինքնագիտակցութիւնը և միահամուռ, իրար յետեւից կանոնաւորապէս կրկնող յաճախակի ցոյցերը Յարի կառավարութիւնը դրել են մի շատ փափուկ և անելանելի դրութեան մէջ: Բանւորական, ժողովրդական ցոյցերի ուրուականը, ճնշուած դասակարգի զարմանալի ինքնաճանաչութիւնը հալածում է ուրիշի աշխատանքից պարարտացած, պորտաբոյծ վարիչներին, և ահա՛ տկարին յատուկ խորամանկութեամբ, սկսել են զանազան գաւառներում փոքրիկ շրջանոր հօւմներ խոստանալ, սակայն այս էլ չէ կարողանում կանգնեցնել խիստ հոսանքի առաջը:

Որպէս յայտնի է, մօտ ժամանակներս Նիկոլա Բ. մի «մանիֆեստ» հրատարակեց, որի մէջ իրեն ցոյց է տալիս ժողովուրդի ցաւերն իմացող և ամբողջ մի գործադուլ հայր, որ գիտէ սրբել թշուառի արտասուքը...: Ինչ դառն հեգնութիւն...: Մի կողմից աքսոր, բանտ ու տառապանք, միւս կողմից «հայրական գորով» արտայայտող ունայն բառեր...: Ռուսաստանի ընդհա-

նուր կացութեան վրայ այս հակիրճ ակնարկը անելուց յետոյ՝ անցնենք յիշեալ հոսանքի շարժառիթներին:

* * *

Այստեղ ներկայումս երկու հոսանքներ կան: Մէկը բաղկացած է զանազան ցեղերի պատկանող տարրերից, որը պատրաստ է՝ հանգամանքից օգտուելով՝ բարձրացնել կարմիր դրօշակը և խուռն բազմութեամբ հակառակարկան ցոյցեր անել. իսկ միւսը՝ բաղկացած է հայ և վրացի ազգութիւններից: Առաջինն ընթանում է պարզ միամտութեամբ, երկրորդը՝ նախաժառանգ գիտակցութեամբ: Աւերջինների մասին կը խօսեմ փաստերով ուրիշ անգամ. այժմ սկսենք առաջինից:

Անցեալ տարուայ մարտ ամսի յայտնի խռովութիւնների ժամանակ ձերբակալուած մարդկանց դատը պաշտպանելու համար սոյն մարտ ամսին փաստաբանները ծանապարհ էին ընկնում դէպի Թիֆլիս: Առիթը պատրաստ էր: Բանւորները խուժ-խուժ ժողովուրդին կայարանի առաջ, որպէս թէ ծանապարհ են ձգում իրենց չարբաշ եղբայրակիցների պաշտպան փաստաբաններին: Գնացքը ծանապարհ ընկնելուց յետոյ, ժողովուրդը, բաղկացած 400—500 հոգուց, պարզեց կարմիր դրօշակը և «կեցցէ» աղաղակելով շարժուեց դէպի «Նուրհա» հրապարակը: Այնտեղից էլ «Մարինսկիյ Պրոսպեկտ» կոչուած յայտնի կենտրոնական փողոցով առաջացաւ դէպի ծովեզր. ապա ընթացքը փոխեց և առաջ խաղաց քաղաքի միջով: Այնուհետեւ խուռն բազմութեամբ, առանց արգելքի հանդիպելու, մի բանի հատ կարմիր դրօշակներ պարզած՝ երեք վերստից աւելի շրջելով քաղաքի մէջ, դուրս եկաւ քաղաքից և գնաց դէպի «Գարադօկ» կոչուած վերստաչափ հեռոււորութեամբ գիւղը և այնտեղ ցրուեց:

Ինչ էր անում այդքան ժամանակ ուստաց քաղաքի ոստիկանութիւնը, գուցէ հարցնէ ընթերցողը: Ծակ ու ծուկ էր մտել, երկիւղ կրելով արդար իրաւունքով և բարկութեամբ զինուած բանւորի բուռնցքների հարուածներից: Մինչև որ ոստիկանապետը կը դիմէր և զօրքի փրկարար օգնութիւնը կը հայցէր և զօրքը կը գար, ամեն ինչ արդէն վերջացել էր:

Նոր տոմարի Մայիսի 1-ին բանւորները չբանեցին, տօն պահելով: Իսկ հին տոմարի Մայիսի 1-ի համար շրջաբերականները, տպւած Թիֆլիսի սոցիալ-դեմոկրատական կուսակցութեան ձեռքով՝ յայտարարում էին բոլոր բանւորներին ամեն տեղ պարզել կարմիր դրօշակը և ժողովրդային ցոյցեր առաջացնել հրապարակների վրայ: Կառավարութիւնը քնած չէր: Բաթումը յանկարծ լցուեց կողակների տարափով, որոնք բաղամթիւ մանր խմբերի բաժանուած՝ օր ու գիշեր շրջում էին փողոցները, «ահեյ թշնամու յարձակումից» Յարի «խաղաղ հպատակների» կեանքը պահպանելու համար...: Այսպիսի ահագին զինեալ պատրաստութեան դէմ դուրս գալը և ցոյց անելը կը նշանակէր հրա-

ցանկից արձակուած կարմրաշէկ գնդակը ձեռքով բռնելը Դրուժիւնը ծանր էր: Սոցիալ գեմոկրատները, կառավարութեան այս ոյժի առաջ անդօր գտնուելով և չը կամենալով ժողովրդին «իշի նահատակ» դարձնել, Մա- յիսի մէկը առանց ցոյցի անցկացրին: Վաղուց է որ Մա- յիսի 1-ը անցել է, սակայն բանւորական ցոյցերի ու- րուականը յամաւորէն հալածում է կառավարութեանը, այնպէս որ կողակների յետ նահանջման պատերազ- մական հրամանը դեռ չէ արձակուած: Կողակները պարապ չըջում են փողոցներում, իրենք էլ երեւի ձանձրացած իրենց տխուր պաշտօնից, առանց թշնա- մու երես տեսնելու: Անցեալ օրը մի կողակ հարցնում է անցորդին միամտաբար. «Բ ու ն թ ը երբ է լինելու» (խռովութիւն), որովհետեւ իրենք սպասում են «բ ու ն - թի» վերջանալուն:

Առ այժմ՝ այսքան:

ՇԵՐՈՒՆԻ

Մ Ի Ն Ո Ր Հ Ա Յ Թ Ե Ր Թ

Ներկայ թուականի Մայիսի 9-ին Բոստօնում սկսել է հրատարակուել «Երիտասարդ Հայաստան» շաբաթաթեր- թը, Ամերիկայի Հնչակեան ընկերների նախաձեռնութեամբ: Թերթի ուղղութիւնը եւ նպատակը երեւում են առաջին թուի առաջնորդողի մէջ, որից աւելորդ չենք համարում քաղել հետեւեալը.—

«Որովհետեւ ամեն ազգ մարդկայնութեան մէկ անդամը չի նշուի, կատարեալ իրաւունք ունի ազատ չի նշել իր անկախ հայրենիքը տեսնելու և իր քախտը իր ձեռ- քով տնօրինել, զերծ որ և է կաշկանդութիւնից. ոռոտի Ե- րիտասարդ Հայաստանն էլ մի և նոյն արդար և ան- ձեանմիայն իրաւունքն է պահանջում իր ազգի, իր երկ- րի համար, մի իրաւունք, սակայն, որ սրբագործել և ձանաչել է ետրուական քաղաքակրթութիւնը, մարդկային յաստատութիւնները, ժամանակակից գիտութիւնը: — Ահա այն սկզբունքը, որ Երիտասարդ Հայաստանի անմիջա- կան, մօտակայ պահանջն է:

Ազգային անկախութիւնը մի միջոց է, քաղաքա- կան մի ձեւ, աւելի քանք նպատակների հասնելու համար:

Մի ժողովուրդ միայն այն ժամանակ կատար- եալ քարեկեցիկ, ազատ, անկախ կշիւի, տէր իր բախ- տին, իր երկրին, երբ նրա միջից կվերանան դասա- կարգային խտրութիւնները, ընկեր ընկերոջ շահագործ- ման միջոցները: Երբ աշխատողը տէր կշիւի իր աշխա- տանքի ամբողջական արդիւնքին, երբ արդիւնաբերու- քեան բոլոր աղբիւրները, հարստութեան բոլոր միջոցնե- րը դրականապէս կպատկանին արդիւնաբերողներին, աշ- խատատերներին: Երբ կը տիրէ համայնական հողատի- րութիւնը, արդիւնաբերութեան հասարական ձեւը: Միայն այդ ժամանակն է որ կտիրէ ընկերային ընդհանուր ներ- դաշնակութիւնը, այն ևս մարդը մարդի գայլը չի դառ- նալ և զօրեղը բոլորին մեղուր ու բոլոր ազգերը եղբայր:

քական կապով իրարու հետ կապած կշիւն: Իսկ այդ միայն այն ժամանակը կշիւի երբ կիրականանան օգի- ալիստական սկզբունքները, որոնք ղեկավարիչ սկզբունք- ներն են «Երիտասարդ Հայաստան»ի ու նրա հետաւոր նպատակը կազմում հայ կեանքի մէջ:

Սրանք են այն հիմնական սկզբունքները և նը- պատակը, որ իր գոյութեան իրաւունքն է արել «Երիտա- սարդ Հայաստան»ը և դրանց հասնելու միակ միջոցը՝ Յեղափոխութիւնը: — Սա ծրագիրն է եղել մեր նախորդ- ների, ծրագիրն է մեր, ծրագիրը պիտի լինի և՛ մեր յետեւորդների, միևնույն որ այդ բոլորը իրականութեան մէջ մտնեն:

Մեզ մնում է միայն ի սրտէ ցանկանալ, որ, «Ե- րիտասարդ Հայաստան»ը, իբրեւ օժանդակ արտայայտիչ Հնչ. Կուս սկզբունքների եւ գաղափարների, անսայթաք եւ յարաձուն գործունէութեամբ առաջ տանէ Կուսակցու- թեան Դրօշը:

Խմբագրութեան հասցէն է՝

“Eritassard Hayastan,,

Roxbury Station P. O. Box 85

(U. S. A.)

Boston, Mass

ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՑԻ ԾՈՒՐԶԸ

Անցեալ յօդուածներովս շարունակ այն միտքն էի յայտնել, թէ Բուլղարական ժողովուրդը՝ դաւանակից և ազգակից լինելով ընդվզումի դրօշը բարձրացրած Մա- կեդոնական հերոս ժողովրդին՝ չէ կարող անտարբեր աչքով նայել կատարուող նախճիրներին: Ապստամբա- կան հրոսակները մեծ մասամբ Բուլղարացիներից և Բուլ- ղարական սպաններից էին առաջնորդուած:

Անշուշտ չէ մոռացել ընթերցողը նաև Բուլ- ղարական միւստրոն—նախագահ Գանեվի արտասանած ճառը Ազգային ժողովում և նրա համարձակ խօսքերը: Այսօր դրութիւնն այն տեղը հասաւ՝ որ իշխան Գեր- գինանդի և Գանեվի միւստրութեան մէջ սուր տարա- ձայնութիւն ծագելով — ի հակէ ներկայ Մակեդոնական հարցի նկատմամբ — արդի միւստրութիւնը տուեց իւր հրաժարականը. սակայն այս մասին ստորեւ Այժմ՝ մի թեթեւ հայեացք նետենք կատարուած իրողութիւնների վրայ:

Սալոնիկի և Մանաստիրի ուժանակների ու ուժմբերի որոտումները ու պայթիւնները, թուում է թէ, շուտ մո- ռացուեցան: Գիշերային ճարձատիւն հրաժարութիւնների նման պահ մի սարսափահար արին, ցնցեցին հասարա- կութեան: Իւր ժամանակին յիշեալ դէպքերը մի կողմից և այն աղմկայոյզ լուրերը, թէ Բուլղարաստանը Մանջու- րիայում արագաբայլ յառաջխաղացութիւններ է անում՝ մեծ շփոթութիւններ յարուցին Եւրոպական — ի հարկէ Մեծ Պետութիւնների — դիւանագիտական շրջաններում: Կարծում էին դժուար կը լինի այնքան սիրելի դարձած,

բայց և այնքան հալածուած ու շահագործուած խաղաղութիւնը պահպանել: Բաւականեան թերակղզու վրայ Մեծ Պետութիւնների գործադուլի միջամտութիւնը «ըստ պառնուած էր» անխուսափելի դառնալ՝ յօգուտ մի թըշուառ ժողովրդի՝ իրենց գծուած շահերի խնկական մըտահոգութեամբ: Խաղաղութիւնը վրդովեցու չարագուշակ ամպերը բարձրացան, կուտակուեցան, երբ Արեւելեան Հարցը օրուայ, այսպէս առած, այրող խնդիրը դարձաւ: Լուծուած ստացաւ: Ինչպէս կարող է այդպիսի տահաւոր թիւրիմացութիւն տեղի ունենալ, բանի որ այնքան երկատարդ է յիշեալ չարաբաստիկ հարցը, հաղիւ 25—30 տարեկան, բերլինում՝ մկրտելոց յետոյ:

Բարեբախտաբար թէ դժբախտաբար, սպառնալից կերպարանքով կուտակուած ամպը ցրուեց. և թէև չէ վերացած բոլորովին, գոնէ այնպէս է երևում, թէ եւրոպական խեղճ խաղաղութիւնը վրդովող սպառնալիքը մերձաւոր Արեւելքից առժամապէս յետաձգուել է:

Այժմ թուեց այն դէպքերն, որոնք թէ յոյս և թէ երկիւղ ծնեցրին փոփոխակի: Բուլղարի և նետուած ուժանակի աւերածութիւնները Սալոնիկում, Բուլղարական սպաներով ղեկավարուած հրոսակների անցկենալը սահմանափակուել, որոնք շարունակ պատերազմում էին տաճկական զօրքերի հետ և մահմեդական «խաղաղ» աղագաւթնութեան մէջ հրկիզութիւններ գործում ու վնասներ տալիս՝ իրենց ճղբայրներին օգնելու ոճրագործ դիտաւորութեամբ՝ այս բոլորը առիթ տուին Արդիւ Համիդի «կառավարութեան», երբ իւր բոլոր առաջադրութիւնները Սօֆիայում ունայն անցան, մի խիստ ծանուցադիր ներկայացնելու, որ սպառնալիք էր հաւասար, և պատերազմն ի նկատի առնուեց: Մեծ Պետութիւններն ի հարկէ իսկոյն միջոցներ ձեռք առան և Բուլղարիային հարկադրեցին սահմանները խստիւ պահպանել, իսկ Սուլթանին էլ ստիպեցին, որ նա ներգութիւն քաշէ՝ իւր սպառնալիքը մեղմացնելու:

Սակայն դիւրին չէր Մակեդոնական և Բուլղարական ապստամբական հրոսակների գործունէութեանը վերջ տալ, եթէ նոյն իսկ երկուստեք առանձին ցանկութիւն լինէր այս բանն անելու: Բաւականեան երկու պետութիւնների լարուած դրութիւնը չէր մեղմանալ և պատերազմի սպառնալիքը առժամապէս, գոնէ, մի կողմը չէր քաշուել, եթէ միաժամանակ տաճկական հզօր բանակի յանկարծական յառաջ խաղաղ Բուլղարացոց առանձին ծանրութիւն չպատճառէր և Մեծ Պետութիւնների մերժողական դրութիւնը՝ որոնք ոչ մի հակում չէին ցոյց տալիս յօգուտ ձեռնածին միջամտելու—յեղափոխական ապստամբական շարժումները անպատակաւ չկարծար չկացուցանէր... 25° որ Երկրորդ Նիկիտայոսը զգուշացրել էր Սերբերին և Բուլղարացոց, որ «խելօք» կենան... Հէնց այս է պատճառը, որ Ալբանիայում յանկարծ կատարեալ լուծութիւն, խաղաղութիւն տիրապետեց: Տաճկաստանի համար այս չափազանց միջիմարական երեւոյթի հիմքը, յամենայն դէպս, տխուր և վրդովեցուցիչ է, որովհետև Ալբանական աղգաբնակչութեան ընդվըղումը, որը կապ ունէր խոստացուած չարաբաստիկ ռէֆորմների իրագործման հետ, միմիայն հետզհետէ մեղմացաւ ու գաղարեց, վասն զի Բ. Դուռը խոստացաւ ամեն ինչ հին ձեռք թողնել: Սալոնիկի, Միտրովիցայի Մոնաստիրի ևն. դէպքերը ցոյց տուին, թէ որպիսի դժուարութիւններ են սպասում ռէֆորմների. այսինքն՝

ձեռնածութիւնների իրագործման. և որովհետև Մեծ Պետութիւնները Արեւելեան հարցի լուծման մասին չեն մտածում, չեն մաածիլ, ու չի էլ յաջողուիլ այդպիսի մի «զարհուրելի» բան՝ պարզ է, որ նրանք Արդիւ Համիդի օձիքը բաց թողին, փոխանակ խեղդելու և բռնուեցրի բարեհաճ մասնակցութեամբ իրենց ասածները կատարել տալու: Այդ շարեցին նրանք, որպէս զի ամբողջ Արեւելեան հարցը չլուզեն — խեղճ չայր — և Հիւանդ Մարդու ժառանգութիւնը բաժանելու առիթով ծագելիք անխուսափելի պատերազմը չբորբոքեն, որովհետև, մանաւանդ, 20-րդ դարում՝ պատերազմը չափազանց վտանգաւոր և օրհասական կարող է դառնալ: Եւրոպական խաղաղութեան համար, — իսկ դուրսը ոչինչ, կարելի է Բուլղարին խեղդել, բիթ ու պուլնգը ջարդուփշուր անել, Եւրոպայի խաղաղութիւնը ինչ գործ ունի դրա հետ: 26-րդ գործուած ռէֆորմները մի տեսակ յաղթանակ են թէ Մեծ Պետութիւնների և թէ Սուլթանի համար...: 25° որ ոչ մէկը գլուխ չունի այդպիսի «զաւժալներին» մէջն ընկնելու:

Անցնենք նորագոյն դրութեան: Յայտնի է, որ մարդիկ սարսափելի ախտ ունին՝ մեծ երեւնալու, աշխարհ զարմացնելու: Մենակ մենք՝ հասարակ մահկանացուներս չենք մեծութեան ախտով վարակուածները. թագաւորներ, իշխաններն էլ այդ թուլութիւնիցն ունին: Գեռ երբ էր, որ Ալեքսանդր Փոքրիկը — Alexander der Kleine — որպէս կոչում էր Սերբիացոց թագաւորին մի գերմանական լրագիր — իւր հօր մահուանից յետոյ՝ բռնուեցրը իւր արքունիքում Աւստրիական պետութեան դէմ բարձրացրած՝ սպառնալիք էր կարդում...: Մեծ երեւնալու զգացմունքն էր գրգռում երիտասարդ արքային, սարսափահար անելու Աւստրիական հզօր կայսրութեան... իւր արքունիքում:

Գիտենք նմանապէս, որ Բաւականեան թերակղզու վրայ կատարող դէպքերի, մասնաւորապէս Մակեդոնական հարցի մէջ, այնքան տխուր և արտառոց դեր խաղացող Ֆերդինանդ իշխանն էլ այդ տիեզերական ախտով բռնուածներին էր մի ժամանակ և է նաև ներկայումս: Իշխանական մի ահեղասպատ հրամանով միանգամում ցանկանում է խեղդել Մակեդոնական շարժումները: Նորին Պայծառափայլութիւնը իշխանական դահի վրայ փառաւորապէս բաղմուց, Մեծ Մարդասպանի «աջը» համբուրելուց ու զանազան դիւանագիտական ցերեմոնիաներից — ձեւակատարութիւններից յետոյ փառք Աստուծոյ, Արքայական Բարձրութեան էլ արժանացաւ, առանց արքայ լինելու, սակայն: Անունն ունէր, ամանը՝ ոչ: Գրա համար Համիդի ձեռքը համբուրելը բաւական չէր... Հզօր Յարի երաշխաւորութիւնն էր հարկաւոր: Պետերբուրգ էլ գնաց իշխանը՝ արքայ դառնալու համար...: Բախտը չժպտաց... Բաւականաչափ առաքինութիւններով — ի հարկէ դիւանագիտական — չէր օժտուած, արքայ լինելու համար:

Արդեօք արքայ դառնալու տենչն է պատճառը, որ Ֆերդինանդ իշխանը դատապարտելի դիրք է բռնել դէպի կոտորուղ ժողովրդի արդար ձայնը, իւր հարազատ հպատակների բացարձակ կամքին հակառակ դռնալով՝ Եւրոպական Մեծ Պետութիւնների և Արդիւ Համիդի գովասանքին արժանանալու համար: Գերմանիայի երկաթէ կանցլերը մի պատկերազարդ թերթում մի ժամանակ ներկայացրուած էր իւր պատմական երկար

ծխամորձով, առաջը Հոհնիսի հշխանը իբրև 7 ամեայ մանուկ, որի ծնունդը փաղաքշուս էր գահազուրկ կանց- լերը, ասելով՝ «Աշխատիր, աշխատիր, իշխանիկս, դու- խաւորն այն է որ վարքդ լաւ լինի»:

Ճիշտ նոյն վիճակումն է, կարծէք, Գերգինանդ իշ- խանը: Ամեն կերպ աշխատում է, որ վարքը լաւ լինի, այսինքն անօգնական ժողովրդի վրին մի չուան էլ ինքը ձգէ և բաղաբազմութեան մէջ ընդունուած այդ բար- ձրը առաքինութեամբ Մեծ Պետութիւններին ու Եւր- դրդի ձեռնածուին հաճոյանայ, ու ով գիտէ, վաղը դրա համար էլ արքայական դահ ստանայ ի տրիտուր: Սակայն դժուար թէ դիւրութեամբ յաջողուի նրա՝ գէ- պի Մակեդոնական հարցը բռնած իւր թշնամական դիր- քը շարունակել: Ի պատիւ Բուլղարական ժողովրդի պի- տի ասել, որ նա իւր «վհայտեան» արամագծօրէն հակառակ դիրք էր բռնել առաջները, այսօր ասելի բա- ցայայտօրէն: Այս բոլորի հետեանքն այն է, որ այժմ Բուլղարիայում բաղաբազմ ճգնաժամ է բռնկուել, իշխանի անձնաւորութեան շուրջը, որը կամ յեղափո- խութեան կը փոխուի, կամ պետական յեղաշրջում առաջ կը գայ, սահմանադրութեան վերացման, մեծաքանակ կալանաւորութիւնների ու պատիժների գուռ բանալով:

Մեղաւորը Գերգինանդ իշխանն է: Սուլթանին խօսք է տուել — ազնիւ խօսք, ի հարկէ, որպէս եզրա- կացնում է ուշիմ ընթերցողը — թէ՛ Բուլղարական ա- գիտատորն երի գործունէութեան հակառակ կը լինի, սահմանադրուի կը փակէ յեղափոխականների առաջ էն: Այսպիսով ներհակ ու հակառակ է ընթանում Բուլղա- րական ամբողջ ժողովրդին, որը կատարելապէս համակիր է Մակեդոնական շարժումներին, ու բացարձակապէս պահանջում է, որ Բուլղարիան իրենց ցեղակից եղ- բայրների ազատութեան Ս. Գործին միջամտէ և Տաճ- կաստանին պատերազմ հրատարակէ, որովհետեւ այն ժամանակ Մեծ Պետութիւնները — այսպէս է մտածում Բուլ. ժողովուրդը — ամենից առաջ Ռուսաստանը, կը մի- ջամտեն յօգուտ տաճիկ բռնակալութեան և տաժանների լծի տակ հեծող ժողովրդի փրկութեան: Իշխան Գեր- գինանդն էլ ուրիշ բաներ է խորհում. ամենից առաջ իւր անձի մասին, ու բացարձակապէս դէմ է կենում հասարակաց կարծիքին, այնպէս որ հարկադրուած կը լինի կծիկը դնել դէպի արտասահման, եթէ ժողովրդի կամքը կատարուի:

Ամեն օր թշնամական սպառնալից ցոյցեր են կա- տարուում իշխանի դէմ, որի անձի պաշտպանութեան համար արտասովոր միջոցներ են ձեռք առնուած: Մին- չև այժմ երկիրը կառավարող մինիստրութիւնը իշխանի հետ բռնն հակառակութեան բռնուելով հրաժարական տուեց: Հաւանական է, որ զինւորական դիքատորու- թիւն էլ հռչակուի: Մակեդոնիայում էլ վերջերս վերս- տին սպսել են ընդհարումներ տեղի ունենալ Տաճկա- կան զօրքերի և Բուլղարական հրոսակների միջև:

Տաճիկ զօրքի մի գումարտակ հայածելով Բուլ- ղարական սպաներով առաջնորդուած մի յեղափ. հրո- սակի, անցնում է սահմանը, սակայն սահմանապահների պահանջմամբ՝ դառնում է կրկին թիւրքիոյ հողը: Սուլ- թանը, խորապէս վշտացած, ներողութիւն է խնդրում իւր սանիկից... Գերգինանդից, այս թիւրքիմասցութեան... թիւրքատեսութեան համար, վառն զի իւր զօրքերը լաւ

չեն նկատած եղել Բուլղարական հողի մէջ ընկնելը... և այդպիսով այս անախորժ միջապէսն էլ վերջանում է...: Ամենից զուարճալին այս անիծեալ թիւրքատեսութիւնը չէ: Սուլթանի ուղարկած առաքելութիւնը դէպի Ալբանիա — որտեղ ծանր յանձնարարութիւն ունէր հաշտութիւն և խաղաղութիւն առաջարկելու — խիզախ Ալբանացոց յար- ձակմանը ենթարկեց մօտ օրերս ու սուսուփուս լեռնե- րի սարաւանդները քարշ տրուեց...: Չգիտենք այս էլ թիւրքատեսութիւնն է, թէ չէ: Կամ թէ, սրա համար ո՞վ պիտի Սուլթանին ներողութիւն խնդրէ...:

Ն Ո Ւ Ի Բ Ա Տ Ի Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Պուսակցութեանս կենտ. գանձարանում շնորհակալութեամբ ըս- տացուել են.—

- «ԲԱՆՏԱՐԱՐ» Հնչ. Մասնագ-ից 100 ռ.
«ՄՈՂԻՍՏԱՐ» Հնչ. Մասնագ-ից 100 ռ.
«ԿԱՍՊԵՆԱՐ ԱՇԽԱՏԱՐ» Հնչ. նորակալով Մասնագ-ից 55 ռ.: Ներքեւ
են.— Բիւսանիս 10 ռ. Բժիշկ, Կոպ, Արամազ, Սէգ, Չիւրոս, Ար- միկ, 5-ական ուրբի. Սուր 4 ռ. Վաղինակ, Փիւզարա, Վահան 3-ա- կան ռ. Չարեգ, Մ. Վարդապետեան 1-ական ռ.
«ԵՐԱՍՏԱՆԱՐԱՐ» Հնչ. Մասնագ-ից 22 ռ. հանգանակուած Կրիս- տոսի ծննդեան և մկրտութեան առթիւ Պ. Պ. Երանկունու և Բուլմ- շուղի ծնորդ և ուղարկուած «Բանտ»-ի միջոցով: Ներքեւ են՝ Միկ Եար, Կոս. Մար, Եակ. Զին, տի. Զին, Հացթուխ, Ս. Եար, Ս. Սոֆ, տ Սազ, Վիշապ, տ. Վիշապ, Ար. Բգ. Օրօսյան խմբի խմբապետից Եար- Ռեգ, 1-ական ռ. Տ. Գ. Եար, տ. Մատ, տ. Միւ, Ս. Էն, տ. Էն, Ժոն տ. Ժոն, Եիւր, տ. Եիւր, Զով. Զով, տ. Զով. Պ. Ղազ. տ. Ղազ., Ս. Մար, տ. Մար, Արշարունի, տ. Արշարունի, Զ. Աղաջ. 50-ական ի
«ԳԵՏԱՐԱՐԱՐ» Հնչ. Մասնագ-ից 40 ռ. այն 71 ռ. 60 ի. զուսմա- րից, որ տացուել է Մասնագ-ը 31 ռ. 60 ի. տեղական ծախսերի յաւ- կացրել: Ներքեւ են՝ Բաշարի խմբի տաճարապետի ծնորդ Մ. Կրակ Գ. Բաշարունի, Գ. Վազր, Գ. Աղէքսանդր 1-ական ռ. Արուէթ 2 ռ. Վա. Սարա 1.50 ռ. Պապիկ Պատանի, Արտաւազ, Բարաբէտեան, Թրգէ Զէրոյ, Ժայռ 1-ական ռ.: Երիտասարդ խմբի տաճարապետ Զրդէ, Հալաբաբեան, Բանբաբեան, Մեղիկապատ, Վառդ, Հալակ, Եա- ւատ, Առիւծ, Լուսակ, Ատոյ, Եանթեր, Կայծակ, 1-ական ռ. Արէթ 2 ռ. Հարազատ խմբից Զուրա, Մառ, Կոստանար, Զանգակ: Ասլան Բէկ, Սլար, Արտաւազ, Սարա, Հայրենիք 2-ական ռ. Ապ- ուր և Տիգրիս 5-ական ռ. Երկաթ, Ղափլան, 3-ական ռ. Կայծակ, Բազարաւ, Պիճան, Ատոյ, Կոստ. Զարեհ, Կոստանի, Զուրիկ, Խէջ, Մլամ, Երանոս, Հայրմայր, Արծիւ, 1-ական ռ. Խազո 50 ի. Եղօ 50 ի. Զիւթ... Հնչ. Մասնագ-ից 20 ռ. Դեղատեղանի միջոցով Ներքեւ են՝ Ազարեկ 2 ռ. Մուշեղ, Ժերուկ, Բոթեան, Վահէ, Մուրճ, Արեւիկ, Կրակ, Արաք, Զարաւա, Անճարեան, Մարիս, Տազօ, Միքայիլ, մի մի ուրբի. մնացած 4 ռ. նուիրողն անյայտ է:
ԱՐԵՎԱՆ Հնչ. Մասնագ-ից 20 ռ. Դեղատեղանի միջոցով ուղար- կուած: Ներքեւ են՝ պ. պ. Արամ Զարեհեանց 4 ռ. Արարիկ 2 ռ. 50 ի Ատոյ 1 ռ. 50 ի Զօյ 2 ռ. Մոծակ 1 ռ. 50 ի. Գեւ. Գ. Գառնիկ 1 ռ. 50 ի Միջոցաւ 1 ռ. 50 ի. Աղուէս 1 ռ. 50 ի. Եաֆի 1 ռ. 50 ի:
ԺԵՆՆՈՆ Հնչ. Մասնագ-ից 3 անգ. ոսկի 8 փէնս:
ՄԱՐ...ՊՈԼԻ Հնչ. Մասնագ-ից 39 ռ. պ. Վահէ Կամսարակա նի ծնորդ: Ներքեւ են՝ Պօլատ 10 ռ. Արարիկ 3 ռ. Զօյ 1 Արարիկ 1, Լուսանէր 2, Մուրճ 3, Ասլան 2, Կայծակ 3, Զաւի- րամ 5, Բալթաթի 2, Կայծակ 2, Վազր 3:

Յօգուածներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ գրամ ու մանդատ ուղարկել հետեւեալ հասցեով.—

M. Bellart, 85, Peckham Rye,
London, S. E. [Angleterre].